

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՊԵՂԱՐՈՒԵՍԱԳԷՏ ԸՆԿ. Արամ Երեմեանի ըննադատական — բանասիրական այս ուսումնասիրութիւնը ռուսահայ թատրոնի պատմութեան նուիրուած առեւտրային աշխատութիւնն է:

Բոլորի համար էլ պարզ է, որ մինչեւ օրս էլ չունինք հայ թատրոնի պատմութիւնը: Ընկ. Երեմեանի աշխատութիւնը գալիս է մասամբ լրացնելու հիմնական այդ բացը: Այդ տեսակէտից էլ, ահա, աշխատութիւնը զանում ենք ուշադրութեան արժանի:

Գիրքը, որ ռուսահայ թատրոնական արեւստին նւիրուած առաջին հատորն է, ամփոփում է իր մէջ 19-րդ դարի առաջին ժամանակաշրջանի ռուսահայ թատրոնի մօտ 50 տարւայ պատմութիւնը: Այնտեղ դուք գտնում էք Ռուսաստանի կուլտուրական գլխաւոր կենտրոնների — Մոսկուայի, Պետերբուրգի, ինչպէս նաեւ Անդրկովկասի կենտրոնական և յետամնաց քաղաքների — Թիֆլիսի, Բագի, Թէոդոսիայի, Երեւանի, Շուշայ, Ալեքսանդրապոլի, Նոր-Նախիջևանի, Մոզդուկի, Ղզլարի — հայ թատրոնների պատմութեան վերաբերեալ խիստ արժէքաւոր փաստաթղթեր — հնագոյն աֆիշներ, պատմական և կենցաղային պիէսների և ներկայացումների նկարագրութիւններ, թատրոնական հին գործիչներ, դերասան — դերասանուհիների, ռեժիսորների, դրամատուրգների վերաբերեալ հարուստ տեղանքներ, ինչպէս նաեւ թատրոնական ընկերութիւնների, կազմակերպութիւնների, դերասանական խմբերի ու թատրոնական արեւստի տարբեր հոսանքների և ուղղութիւնների մասին բազմաբանգ տեղեկութիւններ: Այդ բոլոր նիւթերն ըն-

կեր Արամ Երեմեանը փրկել է դարեւոր փոշիների տակ մնացած հին և առյուծածեռագիրներից, պատմական արխիւներից, թատրոնական յիշատակարաններից, դերասանների յիշողութիւններից, նամակներից և պարբերական մամուլից: Ահա թէ ինչու գիրքը զարգարած է պատմական այնպիսի հարուստ տեղանքով, որոնք կազմում են ռուսահայ թատրոնի պատմութեան ամենաբնորոշ և ամենահետաքրքիր էջերը: Առհասարակ գիրքն իր ամբողջութեամբ թատրոնական արեւստի վերաբերեալ պատմական հում նիւթերի և փաստաթղթերի հարուստ մի շտեմարան է, որի հետ ծանօթանալով դուք, կարողանում էք լրիւ գաղափար կազմել ռուսահայ թատրոնի ծագման, աստիճանական զարգացման և պատմական վերելքի մասին: Գրքի արժէքաւոր կողմերից մէկն էլ այն է, որ զարգարած է թատրոնական աֆիշներով, պիէսների շապիկներով, թատրոնական հին գործիչների և դերասանուհիների նկարներով, մի հանգամանք, որն էլ աւելի բարձրացնում է գրքի պատմական արժէքը: Ահա այդ տեսակէտից էլ ողջունում ենք ռուսահայ թատրոնի պատմութեան նւիրուած այս առաջին հատորը:

Թիֆլիսի հայ Պետական Դրամայի դերասան — դերասանուհիներ

ԻՍ. ԱԼԻԻԱՆԵԱՆ — Ժողովրդական դերասան  
Ա. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ — Վաստակաւոր դերասան  
ԴՈՒՐԵԱՆ — ԱՐՄԷՆԵԱՆ  
ՄԱՐԻԱՄ ՄՈՃՈՐԵԱՆ  
Ա. ԲԵՐՈՅԵԱՆ  
ՄԱՐԻ ԲԵՐՈՅԵԱՆ  
ԵՂԻՇԷ ԹԱԳԷՈՍԵԱՆ — Նկարիչ  
ԳՐԻԳՈՐ ՇԱՐԲԱԲԶԵԱՆ — Նկարիչ

Անժխտելի փաստ է, որ մինչեւ օրս էլ չունինք ռուսահայ թատրոնի պատմութիւնը: Հրապարակի վրայ կան միայն զանազան թուուցիկ յօդուածներ և ակնարկներ, որոնցից իւրաքանչիւրը մի որոշ կողմից լուսաբանում է ռուսահայ թատրոնի պատմութեան այս կամ այն շրջանը: Սակայն քացակայում է ընդհանուր ամփոփ, ամբողջական պատկերը: Դա մի որոշ բաց է ռուսահայ գեղարւեստի պատմութեան բընագաւառում:

Արձանագրենք մի կարեւոր հանգամանք եւս: Բանաստեղծներն իրենց մահից յետոյ թողնում են իրենց երգերը, նկարիչները՝ իրենց նկարները, քանդակագործները՝ իրենց արձանները, իսկ դերասանները... Նրանք բացի մի քանի լուսանկարից եւ լրագրական յօդուածից, ոչ մի արձան չեն թողնում: Նրանց կերտած, քանդակած անմահ տիպերն ու վրձնած պատկերներն իրենց մահից յետոյ համարեա մոռացւում են: Միմէ մեր ասածի ապացոյց չէ՞ ռուս նշանաւոր կօմիկ-դերասան՝ Կոնստանտին Ալեքսանդրովիչ Վառլամովի խօսքերը.

— «Այո՛, կը գայ ժամանակ կը մեռնեմ եւ ես եւ Դաւիդովը եւ Սալվինը... Մեզնից յետոյ հասարակութիւնը նախկին ոգեւորութեամբ կը ծափահարէ ուրիշներին... Ու մեզ կը մոռանան... կարծես մենք նրանց համար երբեք էլ գոյութիւն չենք ունեցել, կարծես մենք մեր ամբողջ կեանքն ու հոգին թատրոնին չենք նւիրել...»:

Միմէ Շէքսպիրի անմահ տողերը — «բաղեցիք և մոռացանք» — բնորոշ չէ՞ն 50-ական եւ 60-ական թւականների հայ դերասան — դերասանուհիներից շատերի համար: Ո՞վ կարող է այսօր լուսաբանել նրանց կեանքի պատմութեան հիմնական մօմէնտները, նրանց անհատական բնաւորութեան բնորոշ գծերը: Ո՞վ կարող է մեզ գաղափար տալ նրանց ստեղծած տիպերի, նրանց աշխարհայեացքի եւ գեղարւեստական անցած ուղիների մասին: Նրանցից շատ շատերը համարեա մոռացւած եւ անյայ-

ԲԱՅՄ. ՆՈՅԵՄԻ. — ԴԵԿՏ. 1933

տուծեան են մատնուած: Այսպէս է ահա ռուսահայ թատրոնի պատկերը: Մի թատրոն, որ երկար տարիների կեանք ունի եւ տեղ է իր տաղանդաւոր արտիստները, դրամատուրգները, բայց չունի իր պատմութիւնը: Այսօր, սակայն, ժամանակն է, որ ռուսահայ թատրոնի անցեալը, նրա նւագումներն ու վերելքը պատմութեամբ պսակի: Դա ժամանակի հրամայողական պահանջն է:

Բայց ի՞նչպէս, ի՞նչ ոգիով: Ամէնից առաջ անհրաժեշտ է հիմնել քատրոնական քանդարան հետեւեալ պայմաններով.

ա) Թատրոնական գգեստարան: Այս բաժնում պիտի հաւաքել յայտնի դերասան — դերասանուհիների տիպիկ դերերի գգեստները եւ դասաւորել ըստ թատերաստեղծների: Այս սրահում էլ պիտի ցուցադրել տաղանդաւոր դերասան — դերասանուհիների արձանները:

բ) Թատրոնական գրադարան: Այս սենեակում պիտի ցուցադրել, ժամանակագրական կարգով, լոյս տեսած պիէսները: Դա անհրաժեշտ է ոչ միայն հայ դրամատուրգիայի, այլ եւ թատրոնի ռեպերտուարի պատմութեան համար: Այս բաժնում պիտի ցուցադրել նաեւ պիէսների ձեռագիրները: Նոյնպէս այստեղ պիտի կենտրոնացնել թատրոնական ժուրնալները, հանդէսները, թերթերը եւ այն բոլոր քննադատութիւններն ու ռէցէնզիաները, որոնք լոյս են տեսել պարբերական մամուլում: Առանձին խնամքով պիտի կազմել դերասաններին եւ դերասանական խմբին նւիրուած նիւթերը, որոնք խիստ արժէքաւոր են դերասան — դերասանուհիների ստեղծագործական տիպերի եւ նրանց գեղարւեստական նւագումների պատմութիւնը լուսաբանելու համար:

գ) Թատրոնական արխիւարան: Այս սենեակում պիտի կենտրոնացնել դերասան — դերասանուհիների ինքնակենսագրութիւն-



ները, նամակները, արտագրած դերերը, յոբելեանական կոչերը, հանդէսների ծրագիրները, շնորհաւորական ուղերձները, հեռագիրները, ձօնուած ոտանաւորները, ժապաւէսները, նրանց թատրոնական յուշերը, յօդւածները, ալբոմները եւ այլն: Առանձին խնամքով պիտի հաւաքել նաեւ թատրոնական ժողովների, խորհրդակցութիւնների, համագումարների արձանագրութիւնները, թատրոնական կոչերը, բոջիւրները, թատրոնական ներկայացումների տոմսերը եւ այլն:

դ) *Թատրոնական ափիշների սենեակ*: Հայ թատրոնի պատմութեան համար խիստ կարեւոր աղբիւրներ են թատրոնական ափիշները: Ամէն մի ափիշ պատմական մի նոր էջ է բանում: Անիրաժեշտ է այդ փաստաթղթերը ժամանակագրական կարգով դասաւորել եւ ցուցադրել:

ե) *Թատրոնական պատկերասրահ*: Առանձին ապակեզարդ պահարաններում պիտի ցուցադրել բոլոր դերասան — դերասանուհիների մեծադիր նկարները եւ տիպիկ դերերի լուսանկարները, որոնց տակ պիտի գրել պիէսի եւ հերոսի անունները, տարեթիւը, թէ ո՞ր թւին է խաղացել եւ ո՞ր թատրոնում: Այս բաժնում պիտի ցուցադրել նաեւ բոլոր դրամատուրգների, ռէժիսորների, նկարիչների, երգիչների, յուշարարների եւ թատրոնական այլ գործիչների լուսանկարները, ինչպէս եւ խմբանկարներ դերասանական խմբերի, թատրոնական ընկերութիւնների, համագումարների, թատրոնական շէնքերի եւ այլն:

Այս բոլոր նիւթերն ու վաւերագիրներն արժէքաւոր են հայ թատրոնի ուղիները, գեղարւեստական — կուլտուրական վերելքը, նւաճումները պարզելու համար: Անիրաժեշտ է առանձին գուրգուրանքով հաւաքել այն փաստաթղթերը, որոնք կապած են հայ թատրոնի պատմութեան հետ:

\* \* \*

Այս պատմութիւնն սկսել ենք գրել Վիեննայում (1921 — 24 թ.), շարունակել ենք Երեւանում (1925 — 29 թ.) եւ վերջացրել Թիֆլիսում 1931 թւին: Օգտւել ենք գրել

խաւորապէս Վիեննայի Միւլիթարեանների, Երեւանի «Միասնիկեանի» եւ Թիֆլիսի «Համութեանի» հարուստ գրադարաններից: Թերթեր ենք համարեա գեղարւեստական ամբողջ հայ մամուլը: Երեւանում նիւթերի հաւաքման գործը հեշտացնելու համար Հայաստանի Լուսաւորութեան կոմիտար՝ Առաւել Մաշեանը տւեց մեզ հետեւեալ պաշտօնական գրութիւնը.

Հ Ս Խ Հ  
Պ ե տ ա կ ա ճ  
Տ ր ա տ ար ա կ ու թ ի ճ  
Երեւան, 1925 թ.

ՎԱՍՅԱԳԻՐ

Խնդրում ենք բոլոր հիմնարկներին րնկ. Արամ Երեւանիւն տալ իր ցանկացած բոլոր նիւթերը և տեղեկութիւնները իր հրատարակչի ժողովածուի համար: ՄՌԱՎԵԱՆ

Նիւթեր տւին մեզ նաեւ Երեւանում եւ Թիֆլիսում ապրող յայտնի դերասան — դերասանուհիները — Գէորգ Տէր-Գալիթեան, Վարդուհի, Մատթէոս Աղայեան, Իսահակ Ալիխանեան, Արուս Ոսկանեան, Օլգա Մայսուրեան, Միքայէլ Մանւէլեան, Գրիգոր Աւետեան, Արմէն Արմէնեան: Բայց ամենալայն չափով օգտւեցինք Գ. Զմշկեանի «Փորձ»ում տպւած «Իմ թատրոնական յիշողութիւններից», Պերճ Պառլեանի յուշերից, դերասան Ամիրան Մանուկեանի «Իմ յիշատակարանը» յօդւածաշարից եւ տիկ. Սիրանոյշի անձամբ հաղորդած տեղեկութիւններից: Նոյնպէս օգտւեցինք դրամատուրգ Միքայէլ Պատկանեանի, Մարկոս Աղաբէկեանի, Գէորգ Զմշկեանի, Միքայէլ Տէր-Գրիգորեանի, Գաբրիէլ Սունդուկեանի, Միրոքատ Ամերիկեանի ձեռագիր փաստաթղթերից:

Այս գիրքը պատկերում է իր մէջ ռուսահայ թատրոնի պատմութեան հիմնական մօմէնտները՝ սկզբնական շրջանից մինչեւ 70-ական թւականը: Արձանագրել ենք գրել խաւորապէս այն փաստերը, դէպքերն ու երեւոյթները, որոնք կազմում են ռուսա-

հայ թատրոնի պատմութեան ամենաբնորոշ եւ ցայտուն էջերը եւ արժանի են առանձին ուշադրութեան: Միաժամանակ սրբագրել ենք այն բոլոր սխալ տեսակէտներն ու եզրակացութիւնները, որ արձանագրել են հայ եւ օտար գրական — թատրոնական պատմագիրները — Վեսելովսկի, Մարկոս Աղաբէկեան, Պերճ Պառլեան, Լէօ, Վըր-Թանէս Փափագեան, Լեւոն Մանւէլեան, Լեւոն Բաբայեան եւ ուրիշները:

Այս հատորը ռուսահայ թատրոնի պատմութեան նւիրւած առաջին ռուսումնասիրութիւնն է եւ իբրեւ այդպիսին, անկասկած,

ունի իր բացերն ու թերութիւնները: Սակայն մի հանգամանք պարզ է, որ այստեղ նկարւած է ռուսահայ թատրոնի անցեալ պատմութեան լրիւ եւ ամփոփ պատկերը: Այստեղ դուք կը գտնէք թատրոնական բազմաթիւ դօկումէնտներ — 200-ից աւելի պիէսներ, ափիշներ, բեմադրութիւնների արձանագրութիւններ, ռէցէնզիաներ, թատրոնական հոսանքների, ուղղութիւնների փաստացի տւեալներ եւ այլն: Այդ բոլոր հոլմ նիւթերը տալիս ենք իբրեւ առաջին ռուսահայ թատրոնի պատմութեան շէնքի կառուցման համար:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

24 Մարտ 1931 թ.  
Թիֆլիս

Հեղինակին լեզուն և ուղղագրութիւնն անփոփոխ կը թողունք: Ծ. Խ.

## ՌՈՒՍԱՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(ՍԿԶԲԻՑ ՄԻՆՁԵՒ 70 — ԱԿԱՆ ԹԻԱԿԱՆԸ)

ՊԱՏՄԱ — ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

19-րդ դարի ՊԱՏԿԵՐԸ

Քաղաքական ինչպիսի՞ յեղաշրջումներ տեղի ունեցան 19-րդ դարի սկզբում և ինչ պատկեր էր ներկայացնում այդ շրջանում Ռուսահայերի հասարակական — կուլտուրական կեանքը: —

1801 թւի փետրւարի 16-ին Ռուսաստանի պատմութեան համար բացւում է մի նոր դարաշրջան: Այդ օրն Անդրէ — կովկասում պաշտօնապէս հաստատւում է ռուսաց տիրապետութիւնը: Բայց կար մի հանգամանք, ամբողջ Արարատեան նահանգը զեռ գտնւում էր պարսիկների գերիշխանութեան ներքոյ: Այդ դրութիւնը, իշխանութեան ներքոյ: 1827 սակայն, երկար չի շարունակւում: 1827 թւականին ռուսական բանակը զբաղւում է թաւականին ռուսական բանակը: Նոր ամբողջ Արարատը՝ մինչեւ Երասխը: Նոր հողամասերը վերականգնելու, շէնացնելու

համար հարկաւոր էին արդիւնագործութեան, առեւտրի մարդիկ: Այդ նպատակով էլ ռուսները ոչ միայն հովանաւորում են տեղացի հայերին, այլ և Պարսկաստանից գրաւում հարուստ վաճառական հայերին: Եւ ահա 40 հազար պարսկահայեր խոյից, Սալմաստից, Թաւրիզից և Մակուից, հայ գնդապետ Լազարեանի առաջնորդութեամբ, հաստատւում են նոր զբաւած գաւառները:

Նոյն պատկերը տեսնում ենք 1828 թւին, ռուս — տաճկական պատերազմի շրջանում: Ռուսական սւիճները նւաճում են թուրքերին: Որպէս պատերազմական տուգանք՝ ռուսները նոր զբաւած նահանգներին կցում են Ախալցխան, Ախալքալաքը, Փոթին ու Անապան՝ իրենց շրջաններով: Երկու տարի անց, 1830 թւին, Կարսից, Էրզրումից և Բայազէդից մօտ



30 հազար հայեր գաղթում են Ախալցխայի և Ախալքալաքի գաւառները։ Այսպէս՝ Կովկասի մեծ մասը, Հայաստանի կարեւոր և հայաշատ նահանգները, անցնում են ռուսական զորքի ներքոյ։

Քաղաքական նոր փոփոխութիւնները բեկում են առաջ բերում հայ ժողովրդի տնտեսական կեանքում։ Նոր կենտրոններում հայերը նւիրում են երկրագործութեան, արդիւնագործութեան, վաճառականութեան և հետզհետէ սկսում են տնտեսապէս զարգանալ ու առաջադիմել։ Մանաւանդ թիֆլիսում հայերի վերին խաւերը շատ ազդեցիկ դիրք են զբաղում եւ ամբողջ առեւտուրը կենտրոնացնում իրենց ձեռքում։ Դեռ 1817-19 թւականներին թիֆլիսում իրենց հարստութեամբ հռչակում են Սարգիս Լուսին-Մելիքեանը և ազնուական Գէորգ Երեմիա Արծրունին։ Սրանցից առաջինը 1817 թւին Ներսիսեան դպրոցի կառուցման համար տալիս է առաջին նւէրը՝ 500 ռ. թղթադրամ, երկրորդը Ամստերդամից բերած տպարանը, իսկ 1824 թւականին վանեցի վաճառական Մահտեսի Գասպար Չարուխչեանը 4600 արծաթ մանէթ է յատկացնում Ներսիսեան դպրոցին, որպէսզի այդ գումարով գրքեր տպագրւին։

Այսպէս էր ահա ռուսահայերի քաղաքական — տնտեսական կեանքի պատկերը 19-րդ դարի առաջին քառորդում, ապա ինչ էր ներկայացնում նոյն պատմաշրջանում նրանց կուլտուր — կրթական կեանքը։

Դա այն ժամանակաշրջանն էր, երբ ամէն տեղ իշխում էր հայ հոգեւորականութիւնը՝ իր կաշկանդիչ զրաբարով։ Ժողովուրդը գտնւում էր խոր սգիտութեան և խաւարի մէջ։ Նա կորցրել էր իր լեզուն, խօսում էր վրացերէն։ Չկար գրականութիւն եւ մամուլ։ Չկային կրթական — կուլտուրական հիմնարկներ։ Չկային դպրոցներ։ Հասարակական կեանքում գերիշխում էին միջնադարեան սնտրիպալատութիւններն ու նախապաշարունակները։

Այսպիսի տիւրը և խաւար պատկեր էր ներկայացնում նաեւ Անդրկովկասի ամեն

նահայաշատ քաղաքը — Թիֆլիսը։ Կուլտուրական — հասարակական գործունէութեան այդ կեդրոնն ահա ինչ դրութեան մէջ էր։

«... Թէ՛ վրացիք, թէ՛ հայք ոչ մի դըպրոց չունէին։ Հոգեւորականները գրել կարգալ չգիտէին և ժամասացութիւնը սովորել էին բերանացի միմեանցից լսելով։ Հայ քահանայք, բացառութեամբ մի երկուսի, իւրեանց ազգանունը ստորագրում էին վրացերէն և կամ բաւականանում էին ստորագրութեան տեղ մեկնոտ մատով կնքել պէտք եղած թուղթը։ Ամբողջ քաղաքի մէջ քաջ հայերէն իմացողի համբաւ ունէր միայն Նորաշէն եկեղեցւոյ ժամկոչ Եղիազար Գալստեանը, որ իւր երկու ոտքով կաղ լինելու պատճառով մնացել էր առանց ձեռնադրելու։ Եկեղեցւոյ ոչ հեռու, խարախանայում, սա վարձած ունէր մի դուքան, ուր գետնի վրայ չոքած էին 13 հոգի մոնթեր — ապագայ քահանայացւոք, և տաւարի թէ՛ անւանեալ ոսկրէ թիակի վրայ գրում և կարդում էին բարձրաձայն։ Ուսուցանողն էր միայնակ այն ժամկոչ Եղիազարը, իւրեան օգնական ունենալով փալախան։ Գուքանի դռները բաց էր, և փողոցում անց ու դարձ անողները կանգնում նայում էին թէ՛ մոնթերի իմաստութիւն ուսանելուն և թէ նոցա փալախայ ուտելիս — «վայ, վայ» գոռալուն։ Գաստաութիւնն էլ շարունակ ու կանոնաւոր չէր և շուտ-շուտ էր ընդհատւում։ Շաբաթը երկու անգամ այդ դըպրոցում խալիֆայ Եղիազարը թանաք էր եփում և կաւեղէն ամաններով ուղարկում էր մոնթերին փողոցներում ծախելու՝ «թանաք առէք» պոռալով։ Բացի այդ՝ օր չէր անցնիլ, ժամ չէր անցնիլ, որ ծանօթները, բարեկամները և առհասարակ «խալիֆայի պատիւ» ճանաչողները չգային ու չխնդրէին, մէկը թէ՛ «մերոնք (ընտանիքը) այսօր բաղանիք են գնում ամբողջ օրով, մի կամ երկու մոնթ թաւ տուր՝ լացքի բողջեք տանեն ու բերեն»։ միւսը խնդրում էր, թէ «կտուրս կաթում է, թող մոնթերը գան, ոտքով տափտափեն կտուրը»։ Երրորդը՝ թէ «սանամէրդ (կնիկս) այսօր հաց է թխում, թող մոնթերից մէկը գայ ծծի երեսային օրօրելու» և այլն։ Եւ մեծահոգի խալիֆան ոչ ոքի խաթրը չէր կտրում ու մոնթերին

թաւ էր տալիս, օրերով այս կողմ, այն կողմն ուղարկում։ Ահա այսպէս էր դարուս սկզբում հայոց վարժարանի նախափայլ թիֆլիսում և այն էլ միայնակ էր և հետը մրցող չունէր։

Իրաց այդ դրութեան մէջ հայ հոգեւորականութիւնը տգէտ էր, ւմբոտ, անպատկառ... Ազնականք և իշխանականք — անուր, գոռոզք իւրեանց ցեղական ծագմամբ, բայց զգրելի վարք ու բարքի տէր, կեղեքիչք, հարստահարիչք ռամիկների ու տկարների։ Ժողովուրդն ընկղմած խաւարի մէջ, բարոյապէս ընկած, օտարամոլութեան հակած (Ա. Երիցեան, «Պատմ. Ներս. Դպր. Ա. 30-31»)։

Երկար շարունակում է այս դրութիւնը։ Ռուսական տիրապետութիւնն ու հովանաւորութիւնը և Անդրկովկասում հետզհետէ արտայայտող վաճառականական, առեւտրական կապիտալն առաջ են բերում մի նոր կեանք։ Սկսում է մի նոր շրջան — խաղաղ զարգացման, մտաւոր և կուլտուրական առաջադիմութեան շրջանը։ Հետզհետէ բացւում են դպրոցներ, զրադաւաններ։ Հիմնւում են տպարաններ թիֆլիսում, Շուշիում, Էջմիածնում, Մոսկւալիսում։ Դեռ 1819 թւին կազմ ու պատրաստ յում։ Դեռ 1819 թւին կազմ ու պատրաստ էր Ներսիսեան դպրոցի տպարանը։ Դա մի մեծ նորութիւն էր թիֆլիսի համար։ Մինչև 1860 — ական թւականներն այդ տպարանում են տպւում համարեա բոլոր հայերէն պարբերական հրատարակութիւններն ու պարբերական հրատարակութիւններն ու զրքերը — Ողբ Եղեսիոյ, Ընթերցածք ու գրոց, Հին կտակարան, այբբենարան, Չամչեանի բերականութիւնը, Խոնդարաշեանի բառարանները։ Նոյն պատմաշրջանում էլ, 1817 թւին, հեռու հիւսիսում — Մոսկւայում, կառուցւում է Լազարեան ճեմարանը, Աստրախանում՝ Աղաբաբեան դպրոցը, իսկ 1824 թւի Դեկտ. 1 — ին թիֆլիսում պաշտօնապէս բացւում է Ներսիսեան դպրոցը, մօտ 80 աշակերտով, որոնց թիւը 1825 թւին հասնում է 208-ի։ Այդ դպրոցն էլ ահա հանդիսանում է ռուսահայ թատերական շարժման կենտրոնը։ Բանանք այդ էջը։

ՌՐՆ Է ՌՌԻՍԱՀԱՅ ԱՌԱՋԻՆ ԹԱՏՐՈՆԸ ԵՒ ԴՐԱՄԱՆ

Ռուսահայ թատրոնի սկզբնաւորութեան շրջանը մինչև օրս էլ վերջնականապէս չի պարզաբանւած. մինչև այժմ էլ դեռ չի լուսաբանւած, թէ իսկապէս ո՞ր քաղաքում և ո՞ր թւականին է սկիզբ առել առաջին թատրոնը և ո՞րն է ամենաառաջին զբաւած պիէսը։

Այն տեսակէտներն ու եզրակացութիւնները, որոնք մինչև օրս իշխել և իշխում են մեր գրականութեան պատմութեան մէջ՝ ռուսահայ թատրոնի ծագման և զրամայի սկզբնաւորութեան մասին, պիտի համարել միանգամայն սխալ և պատմական խոշոր թիւրիմացութիւններ։

Ունիւնք, սակայն, տիրող կարծիքները հերքող ճիշտ կուան. արդեօք կարո՞ղ ենք որոշակի ընդգծել ռուսահայ թատրոնի ծագման ճիշտ թւականը, կարո՞ղ ենք նշել ներկայացւած ամենաառաջին պիէսը։

Այդ էական և կարեւոր հարցերը լուսաբանելու համար նախ շրջանակի մէջ առնենք և սրբագրենք այն բոլոր տեսակէտներն ու կարծիքները, որ արձանագրել են գրական-թատերական պատմագիրները ռուսահայ թատրոնի և զրամայի սկզբնական շրջանի պատմութիւնը գծելիս, ապա ընդգծենք և լուսաբանենք նոր աղբիւրներն ու վարիանտները, որոնք հիմնովին սրբագրում են թատրոնական գրականութեան պատմութեան մէջ մինչև օրս իշխող սխալ տեղեկութիւններն ու եզրակացութիւնները։

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՏԵՍԱԿԷՏԵՐԸ

Որո՞նք են թատրոնական առաջին պատմագիրները, ինչ արձանագրութիւններ են թողել նրանք ռուսահայ թատրոնի և զրամայի ծագման մասին, ինչ են ասում նրանց աւեալներն ու աղբիւրները։

1. Սա այն պատմաշրջանն է, երբ մշակներն օրական վարձ են ստանում 20, 25 և 30 կոպէկ։ Այդ է ցոյց տալիս 1818 Յուլիի 9-ին թիֆլիսում գրւած մի ձեռագիր։ Ա. Ե.



